ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/231 «03» 07 2026թ.

«Արթուր Սուվարյան Ռոբերտի» Ա/Ձ
տնօրեն Ա. Սուվարյանին
(ՀՎՀՀ 26583526)
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք, Միկոյան փ., 11շ., բն. 45,
Էլ. հասցե՝ suvaryanartur0@gmail.com
Հեռ.՝ +37498552494

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և «Արթուր Սուվարյան Ռոբերտի» Ա/Ձ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 19 մարտի 2026 թվականին կնքված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-Ա-21/2026-10 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը պարտավոր էր մատակարարել 391,092 (երեք հարյուր ինսունմեկ հազար ինսուներկու) ՀՀ դրամի չափով կեպիներ:
Գնորդի կողմից ժամկետների խախտման վերաբերյալ Վաճառողին ուղարկվել է գրություն, սակայն վերջինիս կողմից մինչ օրս չի մատակարարվել ապրանքատեսակը և չի կատարել պայմանագրային պարտավորությունները, խախտվել է պայմանագրի 2.1.1 կետը, որը սահմանում է, որ «Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավել»:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի այն է՝ «պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը միակողմանի ամբողջությամբ լուծում է ՀՀ ներքին գործերի նախարարության և «Արթուր Սուվարյան Ռոբերտի» Ա/Ձ-ի միջև կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-Ա-21/2026-10 ծածկագրով գնման Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի ամբողջությամբ լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Ընկերությանը տրվում է 5 օրացուցային օր սահմանված տուգանքը 0.5% (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ 1955,46 (հազար ինը հարյուր հիսունհինգ ամբողջ քառասունվեց) ՀՀ դրամը և տույժը 0.05% (զրո ամբողջ զրո հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ 1713.14 (հազար յոթ հարյուր տասներեք ամբողջ տասնչորս) ՀՀ դրամը վճարելու համար ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար՝ 103,500 (հարյուր երեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը և պայմանագրի ապահովման գումար՝ 69,000 (վաթսունիննը հազար) ՀՀ դրամը փոխանցելու համար ՀՀ ՖՆ գործառնական վարչության N 900008000698 հաշվեհամարին:

Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, «Արթուր Սուվարյան Ռոբերտի» Ա/Ձ-ի տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Տ. Ենոքյան

Ստորաբաժանում՝ Գնումների համակարգման բաժին
Կատարող՝ գլխավոր մասնագետ Ա. Աբասյան
Հեռախոս՝ 010 59 68 57